| | ռ. |
|---|---|
| Համարակութիւն Նուրղլու գեղջ . . . | 40 |
| Համարակութիւն Դալլար գեղջ . . . | 20 |
| Համարակութիւն Չիկիտամլու գեղջ . . . | 50 |
| Համարակութիւն Ուզունբէգլու գեղջ . . | 15 |
| Համարակութիւն Թամամլու և Ղարաջամղալու գիւղօրէից . . . . . . . . | 25 |
| Համարակութիւն Բաշնալու գեղջ . . . | 20 |
| Համարակութիւն Թօխանշալու գեղջ . . | 15 |
| Համարակութիւն վերին Ղըշլաղ գեղջ . | 5 |
| Համարակութիւն Խմանշալու գեղջ . . . | 50 |
| Համարակութիւն Գառնի գեղջ . . . . | 30 |

(Շարունակելի)։

## ԴԱՐՁԵԱԼ ԵՐԵՔ ՀԱՏ ՄԵԾ ԽԱՉԵՐ

Արդէն յայտնի է մեր սիրելի Ազգայնոց՝ Մայր Աթոռոյս նուիրեալ երեք հատ ոսկեզօծ մեծ խաչեր (որ արդէն կանգնուած են 'ի գագաթս նորաշէն երից պահարանաց գմբեթից), և որոց շինութեանց 'ի ձեռն Երժ. Մովսէս Աւագ Քահանայի Սայաթնեանց նպաստողաց անուանքը հանդերձ շնորհակալութեամբք հրատարակուած է 'ի Դեկտեմբերի ԺԲ-րդ թիւ անցելոյ Բ. րդ շրջանի Արարատ ամսագրոյս՝ յերես 193, յորում ինչպէս յաւելցուցած էաք երից խաչից շինութեանց ծախուց՝ վեց հարիւր երկու րուբլի գումարէն հարիւր երկու մանէթ պարտք մնալը, անշուշտ լինելով՝ զի ջանիւք նոյն Աւագ Քահանայի ի Տփխիս բարեպաշտ Ազգայինք ոմանք կը բաղձան նուիրել զայն, որոց զանուանս ևս խոստացած էաք հրատարակել, նոյնպէս յաւուրս յայսոսիկ՝ նոյն Աւագ Քահանայն նուիրանօք յորդի մեծատան անձանց յԱզգայնոց մերոց՝ հարիւր երկու րուբլի հաւաքելով՝ հատուցած է նոյն պարտքը, և նուիրատուաց անուանքը փութացած է հաղորդել մեզ, որոց մեր շնորհակալեքը կը նուիրեմք հրապարակաւ։ Ահաւասիկ նուիրատուաց անուանքը և նոցին նուէրք։

| | | րուբլ. |
|---|---|---|
| Մեծ. | Աղալը Գօնեանց . . | 10 |
| ,, | Աղէքսանդր Թահիրեանց | 10 |
| ,, | Բժիշկ Դանիէլ Լխիցեանց | 10 |
| ,, | Խրիստափոր Մկրտչեանց Տ. Մկրտչեանց . | 10 |
| ,, | Հէջուպ Հէջուպեանց . | 10 |
| ,, | Յարութիւն Շամխարեանց | 15 |
| ,, | Յարութիւն Քէգլխուդեանց | 5 |
| ,, | Յովհաննէս Գաբրիէլեան Տուրինեանց . | 10 |
| ,, | Յովհաննէս Գայթմազեանց | 8 |
| ,, | Նիկողոս Սպիրիտոնեան Պրիտոնեանց . . | 5 |
| ,, | Սպիրիտոն Գօրղանեանց | 10 |

Բարէկ. Խ. Քահանայ Զարիֆեանց։

Վեհ. Կաթողիկոսն ամենայն Հայոց՝ Նոր-Նախիջևանայ մէջ Մայր Աթոռոյս գանձապետութեան պաշտօն վարող Բարեկրօն Խաչատուր Քահանայ Զարիֆեանցին՝ յաղագս հաւատարիմ և անձնանուէր ծառայութեանցն 'ի նոյն պաշտօն, բարեհաճեցաւ Աւագ Քահանայութեան շնորհել։

## ՈՒԽՏԱՒՈՐՔ

Ամսոյս 16-ին՝ Նոր Նախիջևանէն և շրջակայներէն 50-էն աւելի ուխտաւորներ եկան 'ի Մայր Աթոռս։ Նոքա իւրեանց ջերմեռանդն երկրպագութիւնքը մատուցանելով Ս. Տաճարիս Էջմիածնի և կատարելով ուխտերը, 'ի 18-ն ամսոյս մեկնե-